որ կամեսցի յետս դարձուցանել պաշտօնս իւր կարող է ինքն մնասցէ ազատ, բայց եթէ նա կրկին ցանկասցէ պաշտօնի մի՝ գոցէ 'ի տեղի իւր, եթէ ոչ երիս աստիճան քաշ տեղի։

ԳԼՈՒԽ ՄԽ.

Ամենայն ոք որում աստիճանի որ գոցի վեր 'ի տանտպետէ պաշտօնն նորա լիցի ժամանակաւ երիս ամօք.

ԳԼՈՒԽ ՄԽԱ.

Ամենայն պաշտօնատար ծառայեցեալ հաւատարմաբար ժամանակս պաշտօնի իւրոյ, եթէ յետ երից ամաց հաճեսցի ընդ միտս տանուտերաց պաշտօնեայ նմա մնալ, կացցէ և մնասցէ 'ի տեղի իւրում և կրկին հաստատեսցի թղթաւ հրամանաւ, թէ ինքն և առաքողն իւր ևս կամիցեն։

ԳԼՈՒԽ ՄԽԲ.

Պաշտօն Դատաւորութեան, իշխանութեան, զինուորութեան, խորհրդակցութեան մինչ նախարարութիւն, մի՛ ոք գոցի իշխանութիւն զի ելցէ 'ի աստիճանէ իւրմէ 'ի վեր առաւել քանթէ շարս ամենայն ժամ և ամենայն տեղւոջ, եթէ մահու մեռելոց և եթէ վասն գործոց մեղաց, և եթէ 'ի լրմանէ ժամանակի պաշտօնի անկելոց 'ի աստիճանէ, ով ոք իշխան որ իցէ 'ի տեղի նո-